



The Superior Court

STANLEY MOSK COURTHOUSE
FAMILY LAW DIVISION
111 NORTH HILL STREET
LOS ANGELES, CALIFORNIA 90012
CHAMBERS OF
THOMAS T. LEWIS
SUPERVISING JUDGE-FAMILY LAW

Հարգելի ծնողներ,

Ցանկանում եմ տեղեկացնել, որ մեր դատարանը ցանկանում է օգնել Ձեզ ու Ձեր ընտանիքին: Հասկանում եմ, որ այս պահին չփորձեցնող ու բարդ փուլով եք անցնում, և մենք որոշ ռեսուրսներ ունենք, որոնք կարող են օգտակար լինել Ձեզ: Դատարանի կայքում (www.lacourt.org) տեղեկատվություն կա, որը կարող է օգնել Ձեզ հասկանալ դատական գործընթացը: Եւ, Դատարանն ունի դիմումներով կիրառելի ցանցային դարպաս, որն ընտանեկան գործերով ներգրավված կողմերին, ովքեր լեզվական օգնության կարիք ունեն, թույլ է տալիս թարգմանիչ խնդրել նախքան դատական լսումն սկսելը: Թարգմանչի տրամադրման դիմումի ձևը կարելի է ստանալ անգլերեն և մի շարք այլ լեզուներով: Դատարանն ամեն ինչ կանի նիստի օրն ու ժամին թարգմանիչ գտնելու համար, սակայն չի կարող երաշխավորել թարգմանչի ապահովումը: Թարգմանչի տրամադրման դիմումի առցանց դարպաս կարող եք հասնել դատարանի կայքից՝ www.lacourt.org, սեղմելով «Լեզվական հասանելիության ծառայություններ» կոճակը:

Թերևս վեճ ունեք Ձեր ամուսնու/կնոջ, կամ գործի մեկ այլ կողմի հետ այն մասին, թե որտեղ պետք է ապրեն Ձեր երեխաները, ինչ օժանդակություն է տրամադրվելու, կամ ինչպես եք բաժանելու ունեցվածքը: Դուք ունեք դատական լսման իրավունք, որի ընթացքում դատարանի պաշտոնյան այս հարցերի կապակցությամբ Ձեզ համար որոշում կկայացնի: Եթե Ձեր ամուսնու/կնոջից, կամ գործի մեկ այլ կողմից սպառնալից եք գգում, կամ վախենում եք, ապա կան ուղիներ, որով այդ մտահոգությունները կարող եք ներկայացնել դատարանին ու ստանալ օրենքով թույլատրվող պաշտպանություն:

Այսուհանդերձ, դատարան գնալն ընտանեկան վեճերի լուծման միակ ձևը չէ: Բազմաթիվ ընտանիքներ իրենց հարցերի շուրջ համաձայնելու զանազան միջոցներ են գտնում: Նման միջոց են, օրինակ, երբ փաստաբաններն ու ամուսինները հանդիպում են ու բանակցում նախքան դատարան գնալը: կամ երբ կողմերն օգտվում են չեզոք միջնորդի ծառայությունից, որն օգնում է բանակցել խնդրի շուրջ համաձայնելու համար: Դուք ու Ձեր ամուսինը/կինը կարող եք միջնորդի հետ աշխատել առանց փաստաբանների, կամ նրանց ներկայությամբ: Կամ, կարող եք համագործակցային իրավունքի դիմել, երբ փաստաբաններն աշխատում են ֆինանսական ու հոգեկան առողջության մասնագետների հետ՝ քիմային մոտեցմամբ օգնելով Ձեր ընտանիքին գտնել խնդրի արտադատարանային կարգավորում: Եթե դատարան զաջ, հնարավոր է, որ դատարանը կարողանա Ձեզ հղել կամավորական հիմունքով աշխատող նման փորձագետ միջնորդ-փաստաբանի:

Ընտանեկան իրավունքի փաստաբանի ծառայությունից օգտվելը Ձեզ համար կարող է շատ կարևոր լինել: Եթե կանխավճար (վարձ) ի վիճակի չեք մուծել, և պատրաստ եք իրավաբանական աշխատանքի մի մասը կատարել ինքներդ, ապա շատ մասնավոր փաստաբաններ ու ոչ-շահութաբեր կազմակերպություններ առաջարկում են ոչ-փաթեթային իրավաբանական ծառայություններ՝ այսպես կոչված Սահմանափակ շրջանակով ներկայացուցչություն: Եթե ընդհանրապես ի վիճակի չեք փաստաբան վարձել, և գործով պահանջվող որոշ աշխատանքը պետք է ինքներդ անեք, ապա կարող եք ուղղություն ստանալ և դատարաններում գործող ինքնասպասարկման կենտրոններում առաջարկվող սեմինար պարապմունքների և օգնության մասին տեղեկատվություն ձեռք բերել՝ այցելելով դատարանի կայքը՝ www.lacourt.org և սեղմելով «Ինքնասպասարկում» էջակալը:

Այս և նման այլ միջոցների օգնությամբ Ձեր հարցերին պատասխաններ որոնելն ու կողմերին փոխընդունելի լուծումներ գտնելը գերադասելի է մի ցանկի պատճառով: 1) Դուք անմիջականորեն մասնակցում եք լուծումների որոնմանը: 2) վեճը կարող եք ավելի արագ կարգավորել: 3) ամեն ինչ կարող է շատ ավելի էժան արժենալ: 4) գործընթացի ավարտին կարող եք մյուս կողմի հետ ավելի լավ հարաբերություն ունենալ: 5) գործընթացն ավելի նվազ սթրեսային կարող է լինել, քան դատարանում, և Ձեր երեխաներն ավելի քիչ սթրես կունենան:

Եթե փաստաբան ունեք, ապա կարող եք խոսել նրա հետ գործի լուծման այս բոլոր տարբերակների մասին: Որոշ փաստաբաններ կարող են անվճար կամ էժան խորհրդատվություն տրամադրել՝ օգնելու որոշել, թե Ձեր ու Ձեր ընտանիքի համար որ գործընթացն է առավել նպատակահարմար:

Խորհուրդ եմ տալիս կենտրոնանալ ամենակարևորի վրա, այն է՝ կյանքի հաջորդ փուլին անցնելը: Շատերը ժամանակ, ջանք ու դրամ չեն խնայում փորձելով բավարարում ստանալ մյուս կողմի հետ վեճը ձգձգելով, սակայն դա երաշխիք չէ, որ կողմերից որևէ մեկը լիովին բավարարված կլինի արդյունքով, և իրականում կարող է լինել այնպես, որ արդյունքն օգուտ չբերի կողմերից ոչ մեկին:

Եթե երեխաներ ունեք, ապա պետք է հատկապես ուշադիր լինեք Ձեր քայլերն ընտրելիս: Թե՛ Ձեզ, և թե՛ նրանց ձեռնտու կլինի, եթե հնարավոր ամեն ինչ անեք՝ խուսափելու վեճին նրանց անհարկի ներգրավումից, կամ նրանց շուրջ հավամարտելուց: Դարտադիր չէ, որ հաջող համաձայնությունն անբերի լինի: Ձեր երեխայի(ների) հարցով վեճերի միջնորդության համար, ընդ որում այն հարցի շուրջ, թե ամուսնալուծությունից հետո նրանք ինչպես են շփվելու յուրաքանչյուր ծնողի հետ, դատարանն առաջարկում է անվճար միջնորդություն Ընտանեկան դատարանի ծառայությունների միջոցով: Առցանց ժամադրության համար այցելեք www.lacourt.org (սեղմեք «Ընտանիք» և «Առցանց ծառայություններ»), կամ զանգահարեք (213) 830-0835:

Խնդրում եմ պահել այս նամակն ու օգտվել դրանից, իբրև ուղեցույց այն զանազան այլընտրանքային տարբերակների մասին, որոնք հասանելի են Ձեզ:

Անկեղծորեն,

Թոմաս Թրենթ Լուիս (Thomas Trent Lewis), Վերահսկող դատավոր
Ընտանեկան իրավունքի բաժանմունք

Armenian